ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- N - Ա

«ՎԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՄԵՔԵՆԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 37 հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել «ՎԿՍ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված մեքենասարքավորումների և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգումը մինչև 2011թվականի ապրիլի 30-ը՝ համաձայն հավելվածի։

հավելված

ՀՀ կառավարության 2009թ.

N -Ա որոշման

ՑԱՆԿ

«ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված մեքենասարքավորումների և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաների

Հ/Հ	Անվանում (ԱՏԳ ԱԱ)	ԲՄՀ	Ձևակերպման ամսաթիվը	Քանակ	Արժեքը եվրո	Արժեքը (ՀՀ դրամ)	Մաքսային ռեժիմի ժամկետի ավարտը
1	կարի մեքենա 845229000	C 91	19.01.08	2	15915,00	7157930,00	27.11.2008
2	կտրող հարմարանք 845150000	C 91	19.01.08	1	80,00	35981,00	27.11.2008
3	կարի մեքենա 845221000	C 91	19.01.08	1	15100,00	6791376,00	27.11.2008
4	Plotter մեքենա 847149000	C 186	06.02.08	1	300,00	137139,00	30.12.2008
5	կարի մեքենա 845229000	C 186	06.02.08	2	4320,00	1974802,00	30.12.2008
6	կարի մեքենա JUKI 845229000	C 817	19.05.08	6	3694,4	1761084,00	30.12.2008
7	տպագրական մեքենա 844311000	C 525	03.04.08	1	5906,30	2856623,00	03.04.2009
8	բազմաբյուրեղային ինտեգրալային սխեմա 854231100	C 525	03.04.08	2	20,00	10457,00	03.04.2009
9	արդուկող մեքենա 845130800	C 525	03.04.08	1	4716,00	2284101,00	03.04.2009

10	դրոշմակներ թվագրելու եւ կնքելու համար 961100000	C 525	03.04.08	4	468,83	226340,00	03.04.2009
11	կարի մեքենա 845229000	C 525	03.04.08	2	12125,00	5863509,00	03.04.2009
12	կարի մեքենա 845229000	C 525	03.04.08	1	7500,00	3623177,00	03.04.2009
13	կարի մեքենա 845221000	C 525	03.04.08	1	15100,00	7278701,00	03.04.2009
14	կարի մեքենա 845229000	C 917	02.06.08	1	3500,00	1655850,00	02.06.2009
15	կարի մեքենա 845229000	C 917	02.06.08	3	12163,19	5754405,00	02.06.2009
16	օֆսեթ տպագրման ստեղնաշար 844399900	C 1190	09.07.08	1	554,5	256600,00	09.07.2009
17	կարի մեքենա 845229000	C 1190	09.07.08	8	4629,40	2217436,00	09.07.2009
18	կտրող եւ կարող մեքենաներ (օվեռլոկ) 845229000	C 1278	16.07.08	5	5100,00	2543243,00	16.07.2009
19	կարի՝ ավտոմատ մեքենաներ օգտագործված 845221000	C 1278	16.07.08	75	93700,00	46661567,00	16.07.2009
20	կարի՝ ավտոմատ մեքենաներ օգտագործված 845221000	C 1278	16.07.08	12	15000,00	7480446,00	16.07.2009
21	կտոր կտրող մեքենա օգտագործված 845150000	C 1278	16.07.08	1	550,00	298301,00	16.07.2009
22	կարի՝ ավտոմատ մեքենաներ օգտագործված 845221000	C 1278	16.07.08	2	2950,00	1464329,00	16.07.2009
23	կարի՝ ավտոմատ մեքենաներ օգտագործված 845221000	C 1278	16.07.08	2	3100,00	1536798,00	16.07.2009
24	կտրող մեքենա 845150000	C 1279	16.07.08	2	900,00	448454,00	16.07.2009
25	կտրող մեքենա 845150000	C 1279	16.07.08	1	1500,00	763397,00	16.07.2009

26	հագուստի կնոպկա խփելու մեքենա 847989970	C 1279	16.07.08	2	1800,00	888985,00	16.07.2009
27	նախկ./օգտ. լվացքի մեքենա 845141000	C 1411	31.07.08	2	27800,00	14424519,00	31.07.2009
28	նախկ./օգտ. մեքենա չոր մաքրման համար 845110000	C 1411	31.07.08	1	7700,00	4048556,00	31.07.2009
29	կարի մեքենա 845229000	C 1611	29.08.08	1	200,00	89770,00	29.08.2009
30	կարի մեքենա 845229000	C 1611	29.08.08	5	18363,52	8242466,00	29.08.2009
31	կարի մեքենա 845229000	C 1785	18.09.08	5	16005,00	6884071,00	18.09.2009
32	կարի մեքենա 845229000	C 1928	06.10.08	5	16920,00	7109276,00	06.10.2009
33	Կարի մեքենա 84522900	C 2266	12.11.08	1	2100,00	818087,00	12.11.2009
34	Կարի ավտոմատ մեքենա 84522100	C 2266	12.11.08	1	600,00	233738,00	12.11.2009
	Ընդամենը			161	320381,14	153821514,00	

Հիմնավորում

«ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից «Ժամանակավոր նորմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված մեքենասարքավորումների և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաների նկատմամբ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգումը թույլատրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

«ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2007թ.-ի նոյեմբերի 26-ին՝ ՀՀ Վանաձոր քաղաքում: Ընկերությունը հանդիսանում է Գերմանական WKS Textile Solutions խմբի անդամ, որի հիմնադիրներն են՝ «ՎԿՍ տեքստիլվերեդլունգս GmbH» ընկերությունը և Հոլանդիայի քաղաքացի Հաջիկ Գելիջին: Խումբն իր գործունեությունը ծավալում է Եվրոպայում, մասնավորապես՝ Գերմանիայում, Իտալիայում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլն:

Ներկայումս «ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերությունը կազմակերպել է կարի արտադրություն Երևան և Վանաձոր քաղաքներում, որտեղ աշխատում են մոտ 700 մարդ: 2008 թվականին պատվիրատուի հումքով ընկերությունը Գերմանիա է արտահանել 324000 միավոր կարի տարբեր արտադրատեսակներ (խալաթներ, անդրավարտիքներ, բաճկոններ, կոմբինեզոններ և այլն):

Ընկերության երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է Հայաստանում իրականացվող գործունեությունը տարածել նաև հանրապետության սահմանամերձ մարզերում (Լոռի, Շիրակ, Սյունիք, Տաշիր, Տավուշ և այլն), որտեղ կստեղծվեն մինչև 10 հազար նոր աշխատատեղեր: Նշված ծրագիրը կլուծի հանրապետության համար հրատապ հանդիսացող՝ զբաղվածության, սոցիալական, արտադրական, առևտրային և գյուղատնտեսական խնդիրներ:

Մասնավորապես ընկերությունը իր գործունեությունը կծավալի մարզերում հետևյալ ուղղություններով՝

- կարի, տրիկոտաժի, կենցաղային իրերի, մսի և մսամթերքի, թարմ և չոր մրգերի արտադրություն և արտահանում:
- մանրածախ խոշոր առևտրային ցանցերի հիմնադրում հայաստանի ամբողջ տարածքում՝ նպատակ ունենալով բնակչությանը ապահովելու մատչելի և որակյալ արտադրանքով

- **աշխատավարձի եռապատիկ ավելացում առաջին հինգ տարվա ընթացքում և այլն:**

«ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերության գործունեությունը բխում է ՀՀ կառավարության ծրագրի գերակայություններից, այն է՝ տարածքային համաչափ զարգացման ապահովումը: Այդ առումով ընկերությունն իր գործունեությամբ կնպաստի՝

- մասնավոր ներդրումների ներգրավման միջոցով, հատկապես հանրապետության մարզերում թեթև արդյունաբերության զարգացմանը,

- նոր աշխատատեղերի ստեղծմանը, /որոշ չափով լուծելով մարզերում կարևոր նշանակություն ունեցող՝ կանանց զբաղվածության հարցը/,

-սոցիալական ներգրավվածության և մասնավոր ծառայությունների հասանելիությանը:

Հաշվի առնելով, որ վերոհիշյալ աշխատանքներն իրականացնելու համար ներկա դրությամբ Հայաստանում չկան անհրաժեշտ մեքենա-սարքավորումներ և այլ պարագաներ, ուստի ընկերությունը ժամանակավոր օգտագործման նպատակներով դրանք ներ է մուծում այլ պետություններից:

«ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերությունը ունի պայմանագիր գերմանական «Եվրոդրեսս» ՍՊ ընկերության հետ մինչև 30.04.2011թ. մատակարարի հումքով կարի ծառայություն իրականացնելու համար: Ընկերության համագործակցությունը «Եվրոդրեսս» և «Միքսոնս Տեքստիլ» ՍՊԸ-ների հետ կրելու է շարունակական բնույթ:

Համաձայն պայմանագրի արտադրության համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումները և այլ պարագաները տրամադրվում են «Եվրոդրեսս» և «Միքսոնս Տեքստիլ» ՍՊԸ-ների կողմից՝ հանդիսանալով վերջիններիս սեփականությունը և արտահանվելու են հանրապետությունից դուրս աշխատանքներն ավարտելուց հետո: Նշված մեքենա-սարքավորումները և արտադրությանն անհրաժեշտ այլ պարագաները /թվով 161 միավոր/ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը լրացել և լրանում է ըստ ներկրման ժամանակացույցի 27.11.2008թ.-ից 12.11.2009թ.:

Հաշվի առնելով, որ ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հանրապետության համար խիստ կարևոր է հանրապետության մարզերում առկա աշխատատեղերի պահպանումն ու նոր աշխատատեղերի ստեղծումն ու բնակչության սոցիալական արցերի լուծումը և հիմք ընդունելով ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի դրույթը, ըստ որի՝ ՀՀ կառավարությունը կարող է թույլատրել պետության կարիքների, գիտահետազոտական,

կրթական, մշակույթային, մարդկանց և կենդանիների առողջության պաշտպանության, շրջակաա միջավայրի պահպանության նպատակով ներմուծված ապրանքների համար, ժամանակավոր ներմուծում մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը մեկ տարուց ավելի ժամկետով, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկում է ՀՀ կառավարության որոշմամբ «ՎԿՍ Արմենիա» ՍՊ ընկերության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված մեքենասարքավորումների և այլ պարագաների /ընդամենը 161 հատ/ նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը երկարաձգել մինչև 2011թ. ապրիլի 30-ը։